

ԿՈՒԹԵՐԵՆ ԿՈՉ ԿՈՒՂՎԷ ԶՆՁԵԼՈՒ «ՔՈՐՈՆԱ»-ԻՆ ԳԵՄ ՊԱՅՔԱՐԵԼՈՒ ԱՐԳԵԼՔ ՀԱՆԳԻՍԱՅՈՂ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐԸ

ՄԱԿ-ի ընդհանուր քարտուղար Անթոնիո Կուլթերեչ կոչ ուղղած է՝ շնջելու այն պատժամիջոցները, որոնք պետությունները կը խանգարեն «Քորոնա» ժահրին դեմ պայքարելու: Կուլթերեչի խոսքով՝ ան լիովին կ'աջակցի ՄԱԿ-ի Մարդու իրաւունքներու գերագոյն յանձնակատար Միշել Պաչեթի յայտարարութեան, որուն համաձայն, երկիրները պէտք է վերատեսուեան ենթարկեն ընդլայնուած պատժամիջոցները այն երկիրներուն դէմ, որոնք կը պայքարին «Քորոնա» ժահրին դէմ: Կուլթերեչ նախապէս յայտարարած էր, որ «Քորոնա» ժահրի դեմ արդիւնաւետ եւ ուժեղ պատասխան կարելի է տալ միայն համերաշխութեան շնորհիւ՝ կոչ ուղղելով միաւորուելու, մոռնալու քաղաքական խաղերը եւ գիտակցելու մարդկութեան կենսաբանական դիմագրաւած վտանգը: «Մենք դանդաղորեն կը շարժինք ճիշդ ուղղութեամբ, սակայն պէտք է արագացնենք մեր քայլերը եւ պէտք է շատ աւելին ընենք, եթէ կ'ուզենք յաղթել ժահրին», յայտարարած էր ան:

ՆԱԽԱԳԱՀ ԱՌԻՆ ՇԱՐՈՒՆԱԿԵՑ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԿԱԶՄՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Հանրապետութեան նախագահ զօր. Միշել Աուն երկէ նախագահական պալատին մէջ շարունակեց կառավարութեան կազմութեան վերաբերող խորհրդակցութիւնները:

Այս նպատակով նախագահ Աուն կէսօրէ առաջ Պապատայի մէջ ընդունեց երեսփոխանական այն պլոնները, որոնց հետ նախանցեալ օր հանդիպում էր ունեցած:

Նախագահ Աունի այցելեցին Անկախ կեդրոն երեսփոխանական պլոնի ներկայացուցիչ, նախկին վարչապետ Նեժիպ Միքաթին, Լեռնալիբանանի երաշխիք պլոնի նախագահ, երեսփոխան Թալալ



Արլան, Հաւատարմութիւն դիմադրութեան պլոնի նախագահ, երեսփոխան Սոհաւետ Ռատտ եւ Ազատագրում եւ բարգաւաճում պլոնի ներկայացուցիչ երեսփոխաններ Ալի Հասան Խալիլ եւ Սոհաւետ Խաուաժ:

Շար.ը՝ էջ 4

ԱՐԱՐԱԿԱՆ ՄԻԱՅԵԱԼ ԷՄԻՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ՊԱՀՐԷՅՆ ՅԱՐԱՐԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԲՆԱԿԱՆՈՆԱՅՄԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐՆԵՐԸ ԱՏՈՐԱԳՐԵՑԻՆ ԻՍՐԱՅԷԼԻ ՀԵՏ

Սպիտակ տան մէջ երկէ, շուրջ 700 հրաւիրեալներու ներկայութեան ստորագրուեցան Իսրայէլի հետ Արաբական Միացեալ Էմիրութիւններու եւ Պաղեստինի յարաբերութիւններու բնականոնացման համաձայնագիրները, որոնք ծանօթ են «Աբրահամ համաձայնագիրները» անունով: Համաձայնագիրները ստորագրեցին Միացեալ Նահանգներու նախագահ Տանըլտ Թրամփ, Իսրայէլի վարչապետ Պենիա մին Նեթանիահու, Արաբական Միացեալ Էմիրութիւններու արտաքին գործոց նախարար Ապտալա պըն Չայետ եւ Պաղեստինի արտաքին գործոց նախարար Ապտալա-թիֆ Չայանի:

Միացեալ Նահանգներու նախագահ Տանըլտ Թրամփ ստորագրման արարողութեան ընթացքին ողջունեց Արաբական Միացեալ Էմիրութիւններու եւ Պաղեստինի՝ Իսրայէլի հետ «խաղաղութեան համաձայնութեան» ստորագրումը եւ ըսաւ. «Այսօր այստեղ հաւաքուած ենք պատմութեան ընթացքը փոխելու համար, մենք Միջին Արեւելքի մէջ տրոյս արշալոյս մը կը տեսնենք՝ շնորհիւ այս պետութիւններու քաջութեան»:

«Այս համաձայնութիւնը պիտի արտօնէ Արաբական Միացեալ Էմիրութիւններուն, Իսրայէլի եւ Պաղեստինի միջեւ դեպքաններու փոխանակում եւ աշխարհի տարբեր մասերէն իսլամներու կարելիութիւն պիտի տայ Աբրահամի մզկիթ այցելելու», ըսաւ ան՝ աւելցնելով. «Համաձայնութիւնները փաստեցին, որ տարածաշրջանը ազատագրուած է ձախող մտտեցումներէ, եւ մօտ օրէն այլ երկիրներ պիտի հետեւին այս երկիրներուն»:



«Միջին Արեւելքի ժողովուրդը պիտի չարտօնէ, որ Իսրայէլի նկատմամբ առեւտրական ծայրայեղականութեան պատրուակ ըլլայ», շեշտեց Թրամփ:

Իսրայէլի վարչապետ Պենիա մին Նեթանիահու իր կարգին յայտնեց. «Այսօր պատմութեան մէջ շրջադարձ մը կը կատարուի, այսօր մեզի հետ հոս գտնուողներուն, ինչպէս նաեւ վաղը մեզի միանալիքներուն կ'ընեն»՝ «խաղաղութիւն ձեռնարկ»:

Շար.ը՝ էջ 4

ՓՈՄՓԷՕ. «ԻՐԱՆԻՆ ՊԻՏԻ ԱՐԳԻԼԵՆՔ ԼԻՔԱՆԱՆԻ ՄԷՋ ՖՐԱՆՍԱՅԻ ԶԱՆՔԵՐԸ ԱԿԱՆԱՀԱՐԵԼ»

Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարար Մայք Փոմփօ զգուշացուց Ֆրանսան, թէ Լիբանանի մէջ ճգնաժամի լուծման իր ջանքերը կրնան մսխուիլ, եթէ Իրանի աջակցութիւնը վայելող Յըզպալլայի զինման հարցը անմիջապէս չլուծուի:

Փոմփօ «Ֆրանսա Ինթեր» ծայրափոխ կայանէն յայտնեց. «Միացեալ Նահանգներ իրենց պարտաւորութիւնները կատարեցին, եւ Իրանին պիտի արգիլենք չինական հրասայլեր կամ ռուսական հակաօդային պաշտպանութեան համակարգեր գնել, ապա զենքը Յըզպալլային ծախել եւ ականահարել»:



Լիբանանի մէջ Ֆրանսայի նախագահ Էմանուէլ Մաքրոնի ջանքերը:

Շար.ը՝ էջ 4

ՆԱԽԱՐԱՐ ՄԵԱՅԱԿԱՆԵԱՆ ՀԱՆԳԻՊՈՒՄ ՈՒՆԵՅԱՒ ԱՐԱՐԱԿԱՆ ԼԻԿԱՅԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՔԱՐՏՈՒԿԱՐԻՆ ՀԵՏ

Եգիպտոսի Արաբական Հանրապետութիւն կատարած այցելութեան ծիրին մէջ 15 սեպտեմբերին Հայաստանի արտաքին գործոց նախարար Չոհրաբ Մնացականեան հանդիպում ունեցաւ Արաբական լիկայի ընդհանուր քարտուղար Անտոնիո Ալուի Ղեյթի հետ: Այս մասին յայտնեցին Հայաստանի արտաքին գործոց նախարարութեան լրատուութեան եւ հանրային դիւանագիտութեան վարչութիւնը:

Նախարար Մնացականեան խօսեց, որ այս հանդիպումը լաւ առիթ է՝ վերաթերթելու Հայաստանի եւ Արաբական լիկայի միջեւ հաստատուած համագործակցութիւնը եւ ուրուագծելու զայն ընդլայնելու հեռանկարները:

Շար.ը՝ էջ 4

ԵՐԵՍՓՈՒՆԱՆ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԿԱԶՄՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ ԽՈՐՀՐԴԱԿՑԵՅՑԱՒ ՆԱԽԱԳԱՀ ԱՌԻՆԻՆ ՀԵՏ



ՀՀԻ Լիբանանի Կեդրոնական կոմիտէի եւ Հայկական երեսփոխանական պլոնի ներկայացուցիչ, երեսփոխան Յակոբ Բագրատունի երկէ Պապատայի մէջ հանդիպում ունեցաւ հանրապետութեան նախագահ զօր. Միշել Աունի հետ՝ կառավարութեան կազմութեան շուրջ խորհրդակցելու նպատակով:

Հանդիպումին ընթացքին Յ. Բագրատունի հաստատեց, որ նախարարութիւններու հերթափոխութեան մասին ՀՀԻ Կեդրոնական կոմիտէի կեցուածքը սկզբունքային է եւ հիմնէ եկած է, այսինքն՝ անպայման շիի համայնքին չի վերաբերիր:

«Նախարարութիւններու հերթափոխութեան մասին մեր կարծիքը տրոյս է. մենք միշտ ալ ըսած ենք, որ նախարարութիւնները համայնքներու սեփականութիւնը չեն: Մեզի համար անընդունելի է նախարարութիւններու որակումը, ինչպէս՝ ուժային, ծառայութիւններու, երրորդ կամ չորրորդ կարգի նախարարութիւններ: Զետեաքար, մենք համաձայն ենք նախարարութիւններու հերթափոխութեան», շեշտեց ան:

Երեսփոխան Բագրատունի աւելցուց, որ վարչապետին կողմէ նախարարներու ճշդումին պարագային պէտք է իմանանք, որ ո՞վ են նախարարները: «Վերջին հաշուով երեսփոխանական պլոններն են, որ կառավարութեան վստահութեան քուէ պիտի շնորհեն: Այսինքն, ինչքան ալ վստահ ըլլանք վարչապետէն, մենք պիտի ուզենք տեղեկութիւն ունենալ նախարարներուն մասին», յայտնեց ան:

ՀՀԻ Կեդրոնական կոմիտէի ներկայացուցիչը նշեց, որ մերժելի է այն գաղափարը, թէ հոս բոլորը պիտի մտնեն, ուրեմն պէտք է դուրսէն տրոյս նախարարները: «Մենք նախարար ներածելու գաղափարին դէմ ենք: Մենք պիտի մասնակցինք կառավարութեան եւ մեզի անծանօթ մարդու քուէ տալու պատրաստ չենք: Եթէ մենք հայ նախարարին անուան շուրջ համաձայն չըլլանք, վստահ չենք, որ կառավարութեան վստահութեան քուէ կը շնորհենք», ընդգծեց Յ. Բագրատունի:

ՉԱԻՌՇՈՒԹՅՈՒՆ ԵՒ ՓՈՄՓԷՕ ՔՆՆԱՐԿԱԾ ԵՆ ԱՐԵՒԵԼԵԱՆ ՄԻՋԵՐԿՐԱԿԱՆԻ ՎԻՃԵԼԻ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒ ԵՒ ԿԻՊՐԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

Թուրքիոյ արտաքին գործոց նախարար Մեւլուք Չաւուշօղլու հեռաձայնային զրոյց ունեցած է Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարար Մայք Փոմփօյի հետ: Այս մասին կը հարցորէ թրքական «Էն.թի.վի» պատկերասփիւռի կայանը:

Շար.ը՝ էջ 4



ՔԱԼԸՆ. «ՊԻՏԻ ՉԱՐՏՕՆԵՆՔ ՄԵՐ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐՈՒ ԽԼՈՒԻԼԸ»

Թուրքիոյ նախագահի բանբեր Իպրահիմ Զալըն յայտնեց, թէ իր երկիրը որեւէ պետութեան հողերուն նկատմամբ պիտի չմտնէ չունի, եւ նոյն ատեն, վճռական է, որ որեւէ մէկը իր իրաւունքները չխալէ: Այս մասին կը հարցորէ թրքական պետական «Անաստուլ» լրատու գործակալութիւնը:

Զալըն, «Թուրքիոյ»-ի վրայ գրառում մը կատարելով, յայտնեց, թէ արեւելեան Միջերկրականի մէջ գոյութիւն ունեցող տարակարծութիւնները կարելի է խաղաղ ճանապարհով լուծել՝ աւելցնելով, որ ողջամիտ, համապարփակ եւ իրաւունքի վրայ հիմնուած նախաձեռնութիւնները պիտի նպաստեն այդ լուծման:

Ան Յունաստանի եւ Եւրոպական Միութեան անդամ երկիրներուն կոչ ուղղեց՝ արեւելեան Միջերկրականի մէջ գոյութիւն ունեցող տարակարծութիւններուն լուծման համար դիւանագիտական միջոցները չվատնել:



միջոցները չվատնելու եւ առնելու քայլեր, որոնք կը նպաստեն ճգնաժամէն ելք գտնելու ջանքերուն:

«Նախագահ Ռեճեփ Թայիպ Էրտողանի իմաստուն ղեկավարութեան տակ Թուրքիան պիտի շարունակէ գետնի վրայ ու բանակցութիւններու սեղանին պաշտպանել իր իրաւունքները, եւ Յունաստանն ու Եւրոպական Միութիւնը պարտին տարակարծութիւններու լուծման համար դիւանագիտական միջոցները չվատնել»:

ԵԱՀԿ-Ի ՄԻՆԱՔԻ ԽՄԲԱԿԻ ՀԱՄԱՆԱԽԱԳԱՀՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՒ ԱՁՐՊԵՅՃԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐՆԵՐՈՒՆ ՀԱՆԳԻՊԵԼՈՒ ԱՌԱՋԱՐԿ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՅԻՆ

ԵԱՀԿ-ի Մինսքի խմբակի համանախագահներ Իկոր Փոփովը (Ռուսիա), Սթեֆան Վիսքոնթին (Ֆրանսա), եւ Էտորիո Շոճըը (Միացեալ Նահանգներ) Փարիզի մէջ 14 սեպտեմբերին աշխուժ խորհրդակցութիւններ կատարած են: Կը նշուի, որ հանդիպումին ներկայ եղած է ԵԱՀԿ-ի գործող նախագահի անձնակազմի ներկայացուցիչ Անճէ Զասփրիչը:

Շար.ը՝ էջ 4

ՎԵՀԱՓՈԱ ՀԱՅՐԱՊԵՏՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԳՐԻԳՈՐ ՊԵՏՐՈՍ Ի. ՀՈԳԵՒՈՐ ՏԵՐԸ



Երեքշաբթի, 15 սեպտեմբեր 2020-ին Անթոնիոսի մայրավանքին մէջ, Արամ Ա. վեհափառ հայրապետը ընդունեց Հայ կաթողիկէ Գրիգոր Պետրոս Ի. հոգեւոր տերը՝ ընկերակցութեամբ Պելոյի հայ կաթողիկէ թեմի օգնական եպիսկոպոս Գեորգ Ասատուրեանի: Հանդիպման նաեւ ներկայ էին Շահան արք. Սարգիսեանն ու Մակար եպս. Ազգարեանը:

Շուրջ ժամ մը տեւած հանդիպման առանցքը դարձան Լիբանանի հայութեան վերականգնումի աշխատանքները եւ միջամայրաքային գործակցութեան կենսական կարեւորութիւնը:

ԱՐԱՔԱԿԱՆ ՄԻԱՑԵԱԼ ...

Շարունակուած Ա. Էջէն

«Պետութիւններուն խաղաղութեան միանալը չէիք նախատեսեր, սակայն ատիկա իրագործուեցաւ շնորհիւ նախագահ Տանըլտ Թրամփին», ըսաւ Նեթանիահուսը՝ Նշելով. «Իրայելի ժողովուրդը շատ լաւ գիտէ պատերազմի գինը, եւ ալ գիտեմ պատերազմին գինը, ուստի, այո՛, խաղաղութիւնը շատ մեծ պիտի ըլլայ, որովհետեւ խաղաղութիւնը ընդլայնելով պիտի ներառէ արաբական այլ երկիրներ եւ թերեւս վերջնականապէս պաղեստինեփոխարկուեալ եւս հակամարտութեան վերջ տայ»:

Արաբական Միացեալ Էմիրութիւններու արտաքին գործոց նախարար Ապտալա պըն Չայետ յայտնեց. «Այսօր կը կանգնի խաղաղութեան ձեռք երկարելու, խաղաղութեան ձեռք ընդունելու իրողութեան դէմ յանդիման, որովհետեւ այսօր սակաւատես եղջիւր Արեւելքը փոխող արտաքին գործը դեպքի, որ ամբողջ աշխարհին վրայ յոյս պիտի տարածէ»:

«Այս նախաձեռնութիւնը կարելի պիտի չըլլար առանց Միացեալ Նահանգներու նախագահ Տանըլտ Թրամփին եւ անկեղծօրէն աշխատած խմբակին ջանքերուն: Մասնաւորաբար շնորհակալութիւն կը յայտնեմ Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարար Մայք Փոմփոյի, նախագահ Թրամփի փեսայ Ճարետ Բուշների, եւ բոլոր անոնց, որոնք աշխատանք տարին այս մեծ ձեռքբերումի իրագործման համար: Մենք կը հաւատանք, թէ խաղաղութեան արդիւնքը իր ազդեցութիւնը պիտի ունենայ ամբողջ տարածաշրջանին վրայ, եւ թէ խաղաղութեան գաղտնիքը համագործակցութեան ըլլալը քանակաւ, աղբատութեան, մարդկային տառապանքի», ըսաւ ան:

«Խաղաղութեան համաձայնագրները մեզ կարող պիտի դարձնեն առաւել եւս օգնելու պաղեստինցի ժողովուրդին, եւ այսօր եկանք աշխարհին ըսելու, թէ մեր ուղին խաղաղութիւնն է», աւելցուց ան:

Պահրէյի արտաքին գործոց նախարար Ապտալա Չայետի իր խօսքին մէջ Նշեց. «Կանգնած եղբ պատմական օրունս մը եւ յոյսով լեցուն պահունս մը դէմ յանդիման»:

«Պահրէյի եւ Իսրայելի միջեւ խաղաղութեան աջակցութեան հռչակագիրը պատմական քայլ մըն է: Շատ երկար ժամանակ Միջին Արեւելքը ետ մնաց հակամարտութիւններու եւ անվստահութեան պատճառով, ինչ որ սկսնաւ արդէ մեր ամենէն փայլուն երիտասարդ-երիտասարդութիւններու կարողականութիւնները, եւ եւ այժմ համոզուած եմ, որ մեր առջեւ ատիկա փոխելու առիթ մը ունինք», յայտնեց Պահրէյի արտաքին գործոց նախարարը:

«Այն, որուն մասին տարիներ է վեր կ'երագնէ, այսօր իրագործելի դարձաւ, եւ տարածաշրջանին մէջ կայունութեան ու խաղաղութեան յարգանք մը կը տեսնենք», շեշտեց Չայետի՝ աւելցնելով. «Պետք է անպատճառ արագ կերպով աշխատիլ միասնական խաղաղութեան եւ երկու պետութիւններուն միջեւ հարցերու լուծում իրագործելու համար»:

«Միջին Արեւելքը փոխելու առիթ մը ունինք, եւ գործակցութիւնը խաղաղութեան հաստատման ուղին է», ըսաւ ան:

ՆԱԽԱՐԱՐ ՄԵՆՅԱԿԱՆԵՐ ...

Շարունակուած Ա. Էջէն

Երկուստեք գուհունակութեամբ ընդգծեցին հայկական համայնքներուն դերը Հայաստանի եւ արաբական աշխարհի յարաբերութիւններու ամրապնդման առումով:



Նախարար Չոհրաբ Մնացականեան եւ Ամետ Ապուլ Ղեյթ անդրադարձան Մերձավոր Արեւելքի, Հիւսիսային Աֆրիկէի եւ Հարաւային Կովկասի մէջ տեղի ունեցող զարգացումներուն: Երկուստեք մտահոգութիւն յայտնեցին այդ տարածաշրջաններուն մէջ սարդիչ գործողութիւններու եւ կայունութեան ու անվտանգութեան խթանման ուղղուած գործելակերպի դրսեւորումներուն առնչութեամբ՝ շեշտելով տարածաշրջաններուն մէջ խաղաղութեան եւ կայունութեան պահպանման ու ամրապնդման միտող միջազգային հանրութեան միասնական քայլերու կարեւորութիւնը:

Հայաստանի արտաքին գործոց նախարարը իր գրուցակցին ներկայացուց Լեռնային Ղարաբաղի տագնապի խաղաղ լուծման վերաբերեալ Հայաստանի սկզբունքային դիրքորոշումն ու մօտեցումները:

Հանդիպման ընթացքին անդրադարձ կատարուեցաւ պաղեստինեան խնդիրին շուրջ ստեղծուած ներկայ իրավիճակին. նախարար Մնացականեան կարեւոր նկատեց Լիբանանի եւ Սուրիոյ մարդասիրական խնդիրներու լուծման ուղղուած ջանքերը:

ՆԱԽԱՐԱՎՆ ԱՌԻՆ ՇԱՐՈՒՆԱԿԵՑ ...

Շարունակուած Ա. Էջէն

Ըստ տեղեկատուական աղբիւրներու, հանդիպումներու ընթացքին երեսփոխաններ Ռաստ եւ Ալի Հասան Խալիլ յայտնած են, թէ շիի համայնքը կառուած կը մնայ ելեմուտքի նախարարութիւնը ստանձնելու եւ իր նախարարութիւնները նշանակելու իրաւունքին:

Նախագահ Աուհի ետ տեղի ունեցած հանդիպումներէն բացառուեցաւ ժողովրդավարական հանդիպում երեսփոխանական պլոքը, որ նախանցեալ գիշեր պաշտօնապէս յայտնեց, թէ չ'ուզէր կառավարութեան կազմութեան խորհրդակցութիւններուն մասնակցիլ, որովհետեւ անոնք թափօքի շրջանում են եւ հակաօրինական:

Երեկոյեան նախագահական պալատի տեղեկատուական գրասենեակը իրապարակեց հաղորդագրութիւն մը, որ կը նշէ, թէ՛ նկատի ունենալով նախագահ Աուհի առած փրկութեան քայլը սեղնելու ժողովրդավարական հանդիպում պլոքը, անհրաժեշտ կը գտնեն պատասխանել անոր կեցուածքին:

ՓՈՄՓԷՕ. «ԻՐԱՆԻՆ ՊԻՏԻ ԱՐԳԻԼԵՆՔ...»

Շարունակուած Ա. Էջէն

Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարար Մայք Փոմփո Ֆրանսական «Լը Ֆիկարօ» օրաթերթին մէջ լոյս տեսած իր յօդուածին մէջ եւս յայտնեց. «Ռբէլ իրանեան տիրութեան վնասուեցաւ այնքան, որ քան Լիբանան այսօր կը վնասուի»:

Արդարեւ, իրանեան գործակատար Յըզպալլան շուրջ երեք տասնամեակներ է ի վեր եւ այսօր Պէրլուքի մէջ գերակայ քաղաքական դերակատար է: Փութութիւնը համատարած է, ելեմուտական ու քաղաքական համակարգը խանգարուած է եւ հազիւ կը գործէ, իսկ լիբանանցի երիտասարդները փողոցներուն մէջ կը բացագանչեն «Իրան, հեռացի՛ր»:

Փոմփո ցաւ յայտնեց, որ «Ֆրանսան կը մերժէ Յըզպալլան ամբողջութեամբ ահաբեկչական կազմակերպութիւն նկատել, ինչպէս երոսպական այլ պետութիւններ կատարեցին, եւ արգելեց հանդիպեալ Եւրոպական Միութեան՝ Նոյն ուղղութեամբ յառաջ ընթանալու»: «Անոր փոխարէն Փարիզ կը պահպանէ Յըզպալլայի քաղաքական թեմ գոյութեան մասին պատրասեց, հակառակ ահաբեկիչի մը՝ Հասան Նասրալայի իշխանութեան», ըսաւ Փոմփո:

Ան յայտնեց. «Միացեալ Նահանգներու նախագահ Տանըլտ Թրամփ կը կարծէ, թէ (Իրանի) վարչակարգին վրայ առաւելագոյն ճնշումը, եւ ոչ թէ հանդարտեցումը, կրնայ առաջնորդել վերաբերումի փոփոխութեան, որուն կը ձգտիք բոլորս: Այդ պատճառով Միացեալ Նահանգներ իրանեան վարչակարգին քննարկներու վրայ աննախադէպ պատժամիջոցներ հաստատեցին, եւ վերափոխական անոր դէմ զինուորական գազամիւս, որուն կարեւորագոյնը ճակատագրակալութիւնն էր: Սակայն վերջինս իր զանգուածները արգելափակելու պատրաստ էր: Մեկնելով ատկէ, մենք գիտեցք վարչակարգին իրականութիւնն ու սկզբունքը ինչ է. Իրան աշխարհի վրայ ահաբեկչութեան հովանաւորման մէջ յառաջատարն է եւ Միջին Արեւելքի մէջ անկայունութեան հիմնական աղբիւրը, եւ կը կարծեմ, թէ Ֆրանսայի մէջ մեր բարեկամները եւս կը գիտակցին թերահինի իսկական բնոյթին: Հարցն այն է, թէ Ֆրանսան պատրաստ է մեզի միանալու՝ Իրանի դէմ կանգնելու եւ շրջանային խաղաղութիւն ու կայունութեան ապահովելու», իր յօդուածին մէջ կը գրէ ամերիկեան դիւանագիտութեան պետը:

Եալ Նահանգներ իրանեան վարչակարգին վրայ աննախադէպ պատժամիջոցներ հաստատեցին, եւ վերափոխական անոր դէմ զինուորական գազամիւս, որուն կարեւորագոյնը ճակատագրակալութիւնն էր: Սակայն վերջինս իր զանգուածները արգելափակելու պատրաստ էր: Մեկնելով ատկէ, մենք գիտեցք վարչակարգին իրականութիւնն ու սկզբունքը ինչ է. Իրան աշխարհի վրայ ահաբեկչութեան հովանաւորման մէջ յառաջատարն է եւ Միջին Արեւելքի մէջ անկայունութեան հիմնական աղբիւրը, եւ կը կարծեմ, թէ Ֆրանսայի մէջ մեր բարեկամները եւս կը գիտակցին թերահինի իսկական բնոյթին: Հարցն այն է, թէ Ֆրանսան պատրաստ է մեզի միանալու՝ Իրանի դէմ կանգնելու եւ շրջանային խաղաղութիւն ու կայունութեան ապահովելու», իր յօդուածին մէջ կը գրէ ամերիկեան դիւանագիտութեան պետը:

ՉԱՌՈՒՇՕՂՈՒՒ ԵՒ ՓՈՄՓԷՕ ՔՆՆԱՐԿԱԾ ԵՆ ...

Շարունակուած Ա. Էջէն

Չրոյցին հիմնական թեմաները եղած են Միջերկրական ծովու արեւելեան մասին մէջ ստեղծուած իրավիճակը, տեղւոյն վիճելի տարածքներու հարցն ու կիպրական խնդիրը: Կողմերը քննարկած են նաեւ շրջանային այլ հարցեր:

Թուրքիոյ արտաքին գործոց նախարարութեան բանբեր Համի Աբտալայի մտայնութեան ընդհանուր տնօրէն Ֆատի Սանևան:

սոյ նախապէս մեկնաբանած էր Կիպրոսի Հանրապետութեան իշխանութիւններուն եւ Միացեալ Նահանգներու միջեւ կնքուած փոխըմբռման մասին յուշագիրը՝ յայտարարելով. «Այդ փոխըմբռման յուշագիրը պիտի չծառայէ Միջերկրական ծովու արեւելքը խաղաղութեան ու կայունութեան հաստատման, նաեւ հարուած պիտի հասցնէ կիպրական խնդրի լուծման»:

Թուրքիոյ արեւելեան Միջերկրական պետութիւններուն հետ յարաբերութիւնները սրած էին Թուրքիոյ կողմէ այդ երկիրներու ջրային տարածքներուն մէջ պեղման աշխատանքներու սկսումէն ետք:

ԼԻԲԱՆԱՆԻ ՄԵՋ «ԲՈՐՈՆԱ» ԺԱՂՈՎ ...

Շարունակուած 2-րդ էջէն

«Մենք պիտի շարունակենք վարակած պարագաներուն հետապնդումը, ինչպէս նաեւ անհրաժեշտ բոլոր ընտելութիւնները պիտի կատարենք: Պետք է ըսել, որ արձանագրուած վարակումի պարագաներէն միայն մեկը իրանդանացի է», ըսաւ ան:

Հասան շեշտեց, որ Ռուսիոյ բանտին կացութիւնը բարդ է, սակայն ոչ սեւ եւ մուր: «Պատասխանատուութեամբ եւ արթուն կերպով պետք է գործենք, որ պէտքի փորձանքի մէջ չլինանք: Արդէն իսկ սկսանք պատասխանատու մարմիններուն հետ հաղորդակցութիւններուն եւ բանտի տարածքին 20 հիւանդ ընդունող դաշտային հիւանդանոցի դրութիւն մը պիտի ստեղծենք», շեշտեց ան:

Միւս կողմէ, Համատ Հասան նախագահին հետ մը, որուն ներկայ գտնուեցաւ դեղորոքներու սեւտիքային նախագահ Ղասսան Ամին եւ առողջապահութեան նախարարութեան ընդհանուր տնօրէն Ֆատի Սանևան:

Միւս կողմէ, Համատ Հասան նախագահին հետ մը, որուն ներկայ գտնուեցաւ դեղորոքներու սեւտիքային նախագահ Ղասսան Ամին եւ առողջապահութեան նախարարութեան ընդհանուր տնօրէն Ֆատի Սանևան:

Նիստին ընթացքին Հասան շեշտեց, որ ամէն ջանք ի գործ կը դրուի «Զորուստ» ժախիլի դէմ պատուաստը ապահովելու համար՝ աւելցնելով, որ լիբանանեան պետութեան իրաւունքն է իր քաղաքացիներուն համար այս մէկը կատարել:

Հասան նշեց նաեւ, որ Կեդրոնական դրամատան կառավարիչէն պահանջուած է առաջնահերթութիւն ընծայել պատուաստ ապահովելու աշխատանքի ֆինանսաւորման, ինչպէս նաեւ ուղղակի կապ հաստատել ռուսական դեսպանատան հետ՝ հետեւելու համար տուեալներուն, ինչպէս նաեւ ապահովելու այն ուսումնասիրութիւնները, որոնք կ'օժանդակեն արժեւորելու ռուսական պատուաստին կարեւորութիւնը:

ԵՆԿՎԻՄԻՆՔԻ ԽՄԵՐԿԻ ...

Շարունակուած Ա. Էջէն

Համանախագահները քննարկած են շրջանային իրավիճակը՝ յատուկ ուշադրութիւն դարձնելով Հայաստան-Ազրայելեան սահմանին վրայ յուլիսին արձանագրուած մագնողական յաջորդ իրադարձութիւններուն:

Համանախագահները ուշադիր քննարկած ու գնահատած են կողմերուն մասնաւոր ու իրապարակային հաղորդագրութիւնները եւ մտահոգութիւնները:

Համանախագահները ԵԱԿԿ-ի գործող նախագահի անձնակազմին ներկայացուցին տեղեկացած են գետնի վրայ տիրող անվտանգութեան իրավիճակին մասին եւ ողջունած են հսկողութեան հիւղվոյթի վերականգնման առնչուած նախապատրաստութիւնը:

Համանախագահները հեռաձայնային զրոյց ունեցած են Հայաստանի արտաքին գործոց նախարար Չոհրաբ Մնացականեանի ու Ազրայելեանի արտաքին գործոց նախարար Ճեյիւն Պարսմուկի հետ եւ նախարարները իրաւիւրած են յառաջիկայ շաբաթներուն անձամբ հանդիպում ունենալու համանախագահներու հետ՝ համապատասխան դիրքորոշումներու յստակացման համար, առանց նախապայմաններու լուրջ բովանդակային բանակցութիւններուն վերակերպելու նպատակով:

ՎԱՐԱՆԴ ՓԱՓԱԶԵԱՆ ...

Շարունակուած 3-րդ էջէն

Արցախեան պայքարով սկսած ազգային երթին տասնհինգ տարի անց տեղի ունեցած այս հիմնական գիտածոճողը, որ, փաստօրէն, Ղազնակցութեան զաղափարափոստական ինքնութեան առաջին հանրային յստակ ու բարձրաձայն հաստատումն էր, ի դէմս նախկին խորհրդային որբէւ երեկի նման Հայաստանի մէջ եւս «ընկերվարութիւն» յղացքի միակողմանի հասկացողութեան իբրեւ խոչնդակ խորհրդային «սոցիալիզմ»-ին:

Ընկերվարային այդ ելոյթին մեկնակետն ալ միջազգային համակարգն էր, կիզակետը՝ Հայաստանի դիմագրուած աշխարհաքաղաքական բարդ կացութեան մէջ ընկերային արդարութեան պահանջատիրութեան ձեւակերպումը՝ երկիրը գերծ պահելով ներքին վտանգաւոր բեւեռացումները: Հոս եւս մարտահրաւերը նախ Ղազնակցութեանն է. «ՀՅԴ-ի առաջարկները եւ նպատակները իրականացման ձգտող ռազմավարութեան ծիրին մէջ պետք է յստակապէս քննարկել ընկերային պահանջատիրութեան եւ ազգային միասնութեան, ընկերային կայացումը ունի ռազմավարական նշանակութիւն ազգի գոյապայքարի եւ լիարժեք զարգացման ճանապարհին: Աշխատանքը ընդհանրութեան կազմաւորումն է, ընդհանրապէս, պետութեան գործին»: Դարձեալ այժմեական տողեր, որոնք կը յիշեցնեն, թէ Ղազնակցութեան համար ազգային միասնականութիւնն ու ընկերային պահանջատիրութիւնը իրարու առնչակից, զիրար ամբողջացնող ռազմավարական առաջադրանքներ են եւ միայն իբրեւ այդպիսին բանաձեւուած քաղաքական գործն ու խօսույթը կրնան հարազատօրէն արտացոլել Ղազնակցութեան առաքելութիւնը:

Ընկերվարային յօդուածներն ու դասափոխութիւնները իր կենդանի գործին բանաձեւումն են իբրեւ դաշնակցական քաղաքական մտածողութիւն: Անոնց մեկտեղում հատորի մէջ առանձին փառս մը պիտի ըլլայ այդ մտածողութեան զարգացման՝ անկունադարձային ՀՅԴ 20-րդ Ընդհանուր ժողովէն մինչեւ Արցախեան ազատամարտով եւ Հայաստանի անկախացումով կուսակցական գործի դիմագրուած այժմեական մարտահրաւերները: Անոր մէջ ընկերվարային կը պարտիքը Ղազնակցութեան գործին՝ ազգային միասնականութեան կայացումը եւ ընկերային արդարութեան պահանջատիրութիւն իբրեւ ռազմավարական տեսութիւն բանաձեւումը, իր մեծ վաստակը՝ ո՛չ միայն իբրեւ ուղեցոյց քաղաքական ծրագրումի, այլ նաեւ մանաւանդ՝ իբրեւ ամուր ենթախող՝ դաշնակցականի կազմաւորման:

Պուէնու Այրեւ, 12 սեպտեմբեր 2020

ՊԵՐԻՒՅԸ ԳԵՐԸՆԻ ԿԵՏ ...

Շարունակուած 2-րդ էջէն

Նախագահական պալատին մէջ տեղի ունեցած խորհրդակցութիւններուն մասին հարցումի մը պատասխանելով՝ Ֆրոյզի յայտնեց, որ հանրապետութեան նախագահի գործը Միշըլ Աուր բոլոր լիբանանցիներուն նախագահն է եւ եթէ ան փափաքած է երեսփոխաններուն տեսակետները իմանալ, ապա ոչ մէկ արգելք կայ այդ գծով:

Պրորիի այցելեց նաեւ Քաղաքացիական պաշտպանութեան ուժերու ընդհանուր տնօրէն Ռեմոն Կաթարը:

Քննարկուեցաւ Քաղաքացիական պաշտպանութեան ուժերու կամաւորներուն թղթածորարը: Պրորի դրուատեց անոնց աշխատանքը:

Այն թիւի այցելուներէն եղաւ նաեւ Լիբանանի մէջ ՄԿԿ-ի ընդհանուր քարտուղարի անձնակազմի ներկայացուցիչ Իսն Քիւպիչը:

Հանդիպումին ընթացքին քննարկուեցան լիբանանեան իրադարձութիւններն ու արձանագրուած ընդհանուր զարգացումները: